ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» 06 2019թ. N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 23-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2019 թվականի մարտի 4-ի «ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը և կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 28-ի N 80-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 23-Ա հրամանով հաստատված 1-ին հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հրամանի 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Revoked certificate

ՎԱՀԱԳՆ ՎԵՐՄԻՇՅԱՆ

Signed by: VERMISHYAN VAHAGN 2512640374 Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

«Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2019 թվականի հունվար 26-ի N 44-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Սույն կանոնադրությամբ սահմանվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման ենթակա գործունեությունների տեսակների վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից որոշումներ կայացնելու համար հիմք հանդիսացող եզրակացություններ տվող լիցենզավորման հանձնաժողովի գործունեությունը:

1.2.Քաղաքաշինության լիցենզավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի հրամանով: Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Կոմիտեի նախագահը:

1.3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության կողմից ընդունված քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման կարգերով և սույն կանոնադրությամբ:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Հանձնաժողովը որոշում է կայացնում լիցենզիա (լիցենզիայի ներդիր) տալու, դրանց գործողությունները կասեցնելու կամ դադարեցնելու համար եզրակացություն տալու մասին:

2.2. Հանձնաժողովի եզրակացությունը տրվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Հանձնաժողովը կազմված է Հանձնաժողովի նախագահից, Հանձնաժողովի 6 անդամից և քարտուղարից:

3.2. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

3.3. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նիստին մասնակից բոլոր անդամների համաձայնությամբ անդամներից մեկը: Հանձնաժողովի անդամներ կարող են լինել միայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակիցները:

3.4. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

3.5. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հօգուտ հայտատուի:

3.6. Հանձնաժողովի նիստի վայրի, օրվա ու ժամի մասին տեղեկատվությունը հրապարակվում է https://www.azdarar.am/ հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Կոմիտեի պաշտոնական կայքում՝ նիստի օրվանից առնվազն հինգ օր առաջ:

3.7. Քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման համար ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով Հանձնաժողովի անդամներին էլեկտրոնային եղանակով ուղարկվում են նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ:

3.8. Հարցի քննարկմանը հայտատուի չմասնակցելը հիմք չէ հայտը չքննարկելու կամ հայտը մերժելու համար, եթե հայտատուն չի խնդրել քննարկումն անցկացնել այլ ժամկետում: Հայտատուի սույն կետով նախատեսված խնդրանքը կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի պատճառով կամ քննարկումը հետաձգելիս չեն խախտվի օրենքով նախատեսված քննարկման ժամկետները:

3.9. Հայտատուն կարող է քննարկմանը մասնակից դարձնել մասնագետի, փորձագետի, աուդիտորի, իրավաբանի կամ թարգմանչի: Հայտատուն կամ նրա շահերի պաշտպանները կարող են ելույթներ ունենալ, պատասխանել Հանձնաժողովի անդամների հարցերին, միջնորդություններ հարուցել:

3.10. Հանձնաժողովի նիստերում հարցերը քննարկվում են դռնբաց:

Դռնփակ են քննարկվում այն հարցերը, որոնց քննարկման ժամանակ բացահայտվելու են պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Դռնբաց քննարկվող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել նախագահի թույլտվությամբ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, լրագրողներ, մասնագետներ և պաշտոնատար այլ անձինք:

3.11. Հանձնաժողովը որոշումը կայացվում է հարցի քննության ավարտից հետո, առանձին սենյակում՝ դռնփակ քվեարկությամբ: Հանձնաժողովի կողմից որոշման կայացման ժամանակ այդ սենյակում գտնվում են միայն հանձնաժողովի անդամները:

3.12.Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որում նշվում է՝

ա) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

բ) հանձնաժողովի կազմը,

գ) քննարկվող հարցի բովանդակությունը,

դ) քննարկմանը մասնակցող անձանց մասին տեղեկությունները,

ե) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

զ) հարցի քննարկման ընթացքում հետազոտված փաստաթղթերը և այլ ապացույցները,

է) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը,

ը) տեղեկություններ՝ ընդունված որոշման կամ եզրակացության հրապարակման մասին:

Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները և քարտուղարը:

3.13.Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են և պատշաճ ձևով ծանուցվում են հայտատուին:

3.14. Հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք,

բ) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները,

գ) հանձնաժողովի նիստի արձանագրությունը ներկայացնում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին՝ սահմանված կարգով Կոմիտեի նախագահի համապատասխան հրամանի նախապատրաստման համար:

3.15. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը,

բ) տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի հերթական նիստի անցկացման վայրի, ժամանակի և քննարկվող հարցի մասին՝ նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

գ) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում Կոմիտեի լիցենզավորման վարչության կողմից հայտերի նախնական ուսումնասիրության արդյունքները և յուրաքանչյուր հայտի վերաբերյալ եզրակացությունները.

դ) ապահովում է հրապարակումը https://www.azdarar.am/ հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

է) Կոմիտեի գլխավոր քարտուղարը հանձնաժողովին ապահովում է նիստերի անցկացման համար պատշաճ կահավորված աշխատասենյակով:

3.16. Հանձնաժողովի անդամները՝

ա) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են անել հարցադրումներ և քվեարկել.

բ) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին.

գ) հանձնաժողովի անդամի կողմից ավելի քան երկու ամիս նիստերին չմասնակցելու դեպքում, հանձնաժողովի նախագահն առաջարկություն է ներկայացնում Կոմիտեի նախագահին հանձնաժողովի անդամին փոխարինելու համար: » :

«Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2019 թվականի հունվարի 26-ի N 44-Ա հրամանի

ԿԱԶՄ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝ Ռաֆայել Ավետիսյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ՝	
Արմեն Մինասյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի խորհրդական
Խաչատուր Ղալթախչյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավաբանական վարչության պետ
Արսեն Միրզոյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության պետի պաշտոնակատար
Աղասի Հովսեփյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության գիտատեխնիկական քաղաքականության բաժնի պետ
Արամ Բաբաջանյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության խորհրդական
Հարություն Հարությունյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ
Հանձնաժողովի քարտուղար՝	
Գևորգ Սիմոնյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության գլխավոր մասնագետ

:»